ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան 17.01 2017 թվական

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ Կողմ-1), ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, և «Հայփոստ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս ընկերության գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Ավագյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման, (ասյուհետ՝ Կողմեր) 2010թ. դեկտեմբերի 29-ին կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1 կետի համաձայն՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սոցիալական ապահովության համապատասխան ծրագրերով ֆինանսավորման համար սահմանված հատկացումները, Կողմերը համաձայնվել են 2017 թվականի համար Պայմանագրի գինը, ըստ ծրագրերի, սահմանել 1 871 023 800 (մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասունմեկ միլիոն քսաներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝

1) N 1 հավելվածի՝ 08 բաժնի, 02 խմբի, 05 դասի N 13 ծրագրի («Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի հետ կապված ծառայություններ») ֆինանսավորման համար՝ 456 000 (չորս հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ,

2) N 1 հավելվածի՝ 10 բաժնի, 09 խմբի, 02 դասի N 06 ծրագրի («Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ») ֆինանսավորման համար՝ 1 869 019 800 (մեկ միլիարդ ութ հարյուր վաթսունինները միլիոն տասնիններ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ,

3) N 1 հավելվածի՝ 10 բաժնի, 09 խմբի, 02 դասի N 18 («Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճարի վճարման հետ կապված ծառայություններ») ծրագրի ֆինանսավորման համար՝ 1 548 000 (մեկ միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և համարվում է Կողմերի միջև 2010 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից:

2.3. Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրով սահմանված դրույթը:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.4. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն ք.Երևան Նալբանդյան 13 1) Հ/Հ 900011556264 2)Հ/Հ 900011556348 3) Հ/Հ 900011474252 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Ծառայության աշխատակազմի ղեկավար	«Հայփոստ» ՓԲ ընկերություն ք.Երևան Սարյան 22 Հ/Հ1930003703150100 ՀՎՀՀ 02507464 ՞Կոնվերսբանկ՞ ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Մ.Մինասյան Կ.Տ	Հ.Ավագյան Կ.Տ